



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 14

### ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ: Տէրը երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամենքն ալ խտրորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան. չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկը: Երբեք խելքի պիտի չգա՞ն բոլոր անոնք, որոնք չարիք կը գործեն. անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրբեն, հացի պէս, եւ Տիրոջ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ Տէրը գիրենք ահ ու դողի պիտի մարնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է: Չարագործները աղքատին խորհուրդները կը հեզնեն, բայց Տէրը ինքն է անոր ապաւէնը: Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Միոնէն պիտի գայ: Երբ Տէրը ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

8:1-22

### ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՎԻՃԱԿԸ (8:1-3)

Մեզի ծանօթ փապանաքարերու վրայ ընդհանրապէս այսպէս արձանագրուած են. «Ասր հանգ- չ/», որ կը նշանակէ հոս կը հանգչի: Տակաւին, ժողովրդային արածը կ'ըսէ. «*ոսկորները հանգչին*», բայց փետք այնպիսի վիճակ մըն է որ կը սպասուի Երուսաղէմի բնակիչներուն, որոնց նոյնիսկ ոսկոր- ները հանգիստ պիտի չգտնեն: 1-2 համարները այդ երեւոյթն է որ կը պարզեն «Յուդայի թագաւորնե- րուն, իշխաններուն, քահանաներուն, մարգարէներուն, բնակիչներուն ոսկորները իրենց գերեզմաննե- րէն պիտի հանեն եւ պիտի ցրուն արեւուն, լուսնին եւ երկինքի բոլոր զօրքերուն առջեւ որոնք սիրեցին եւ անոնց երկրպագութիւն ըրին: Անոնք պիտի չհաւաքուին ու պիտի չթաղուին: Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան»: Այս երեւոյթը ցոյց կու տայ թշնամիին վայրագ վիճակը, միւս կողմէ, գերեզմաններէն դուրս հանել ցոյց կու տայ, մի գուցէ այդ դիակներուն հետ եթէ բան մը թաղած են անոնք ալ կողոպտելու: Այն բոլոր արձանները, որոնց երկրպագութիւն կ'ընէին, ոչ մէկ օգնութիւն պիտի գայ հոնկէ: Այդ արձանները «սիրեցին, ծառայեցին, ետեւ գացին, փնտրեցին եւ անոնց երկր- պագութիւն ըրին», փոխանակ ճշմարիտ Աստուածը սիրելու, Անոր ետեւէն երթալու, զԱնիկա փնտրելու եւ Անոր երկրպագութիւն ընելու: Տեսք անոնց կապուածութիւնը այդ կուռքերուն: Ահա այդ ահաւորու- թեան պարճառով մահը աւելի նախընտրելի պիտի ըլլայ կեանքէն այս չար ազգին բոլոր մնացորդներուն: Բացի այն միւս մնացորդներէն որ Տէրը պիտի պահէ փրկութեան համար: Մահը յաճախ նաեւ ազա- րագրութիւն է, բոլոր անոնց որոնք այնպիսի ահաւոր կացութեան մէջ կ'ապրին, որ կը նախընտրեն մահանալ քան՝ ապրիլ (3 հմր):

### ՄԵՂՔ ԵՒ ՊԱՏԻԺ (8:4-22)

Հարցականով մը կը սկսի Տէրը այս բաժինը, ըսելով. թէ «պիտի չելլեն, ետ չի՞ դառնան: Ընդհա- կառակը միշտ խտրորեցան, նենգութեան յարեցան եւ դառնալ չուզեցին» (4-5 հմր): Այո, կրնայ ըլլալ, իյնանք, կրնայ ըլլալ որ խտրորինք, բայց առ նուազն գիտակցութիւն է պէտք վերստին ելլելու, ետ դառ- նալու, որպէսզի Տէրը փրկէ մեզ: Առաւել եւս, ոչ ալ ուզեցին անդրադառնալ ու զոջալ իրենց չարութեան համար, ու ըսել «ինչ գործեցի» (6 հմր): Այնպէս ինչպէս Ադամի պարագային, եւ ընդհանրապէս մարդ արարածի հոգեբանութիւնն ու մտածելակերպն է, երբեք պարտաւոր չէ իր գործած մեղքը ընդունելու: Աստուած միշտ սպասման վիճակի մէջ է թէ երբ մեղաւոր մարդը Իրեն պիտի վերադառնայ, ու Ինք փրկէ:

Ինչպէս Եսայի մարգարէն կ'ըսէ. «Եզր իր փերը կը ճանչնայ, ու էշը իր փիրոջ մտուրը, բայց Իսրայէլ զիս չի ճանչնար» (1:3), նոյնպէս ալ Երեմիա մարգարէի ճամբով Տէրը կ'ըսէ. «արագիւր իր որոշ ժամանակը զիտէ, փայտակը, կտունկը ու ծիծեռնակը իրենց գալուստին ժամանակը զիտեն, բայց իմ ժողովուրդս Տիրոջ դատաստանը չի զիտեր» (7 հմր): Ամբողջ բնութիւնը կը հետեւի իր դրուածքին ու բնագոյնին, բայց մարդը, որուն փրուած է ազապ կամք, որպէսզի այդ ազապ կամքով ընտրէ բարին, բայց արդէն խտրորած ու նոյնիսկ չի մտածեր վերադառնալու մասին: Կենդանական աշխարհը բնագոյնով զիտէ ժամն ու ժամանակները չուտելու պաղ փեղերէն դէպի աւելի ջերմ փեղը, իսկ Աստուծոյ ժողովուրդը երբեք չի վերադառնար մեղքի պաղութենէն Աստուծոյ ջերմ ողորմութեան: Ու ինքզինք այնպէս կը ներկայացնէ որպէս իմաստուն, սակայն հեռու է ճշմարիտ իմաստութենէն, հեռացած Աստուծոյ ճամբէն, առաւել եւս Աստուծոյ խօսքը անարգած: Փոխանակ այդ խօսքով ապրելու եւ առաջնորդուելու (8-9 հմր):

Ահա այն երկիրը որ իբրեւ ժառանգութիւն փրուած էր Իսրայէլի ժողովուրդին, հիմա պիտի փրուի օտարներուն, որովհետեւ «պզփիկէն մինչեւ մեծ ազահութեան ետեւ եղան, ու ստութեամբ կը վարուին» (10 հմր): 10-12 հմրները նոյն կրկնութիւնն են գրեթէ 6:12-15, ուր ցոյց կու տայ անոնց արարքին արդիւնքը: Այդ իսկ պարճառով. «որթապունկին վրայ խաղող պիտի չըլլայ, եւ թզենիին վրայ թուզ պիտի չըլլայ» (13 հմր): Խորհրդանշական եւ փոխաբերական իմաստով պէտք է առնել նշուած համարը, որ կ'ակնարկէ Իսրայէլի համար: Ինչպէս առիթով մը Քրիստոս ինք պիտի ուզեր պտուղ քաղել, բայց չգտաւ, որուն համար ալ անիծեց թզենին (Մարթ 21:19, Ղկ 13:6-9): Կամ մէկ այլ ուրիշ առիթով Քրիստոս դարձեալ պիտի նմանցնէ եւ եւ որթը դուր ճիւղերը, այն ճիւղը որ պտուղ չի փար պիտի կտրուի (Յովի 15:5):

Ահա իրենց այդ ահաւոր վիճակին մէջ Տէրը կը փնտրեն, որպէսզի զիրենք ազապէ, բայց կարծէք Տէրը հոն չէ: Բայց արդե՞՞ք հոն չէ: Տէրը ինք կը պարասխանէ ըսելով. «Անոնք զիս բարկացուցին

**իրենց կուռքերով եւ օտարներուն ունայնութիւններովը»** (19 հմր): Սուր մարգարէները սուր խոստումներ փռուին, բայց ահա ամառը վերջացաւ, հունձքի արեւը անցաւ, բայց անոնք չփրկուեցան (20 հմր): Ի փես այդ երեւոյթին, մարգարէն իր ցաւը կ'արտայայտէ, երբեք անարարքեր չի մնար, այլ ընդհակառակը կը վշտանայ, ողբ ու սոսկումը կը պատէ զինք (21 հմր): Եւ կը հարցնէ միտք Գաղասադի մէջ բալասան կամ բժիշկ չկա՞յ, որպէսզի ժողովուրդիս աղջիկը բժշկութիւն գտնէ (22 հմր): Գաղաղա շրջանը նշանաւոր էր բալասանով ու համեմներով, որոնք բժշկութեան յարկութիւն ունին, ինչպէս կը կարդանք Ծննդ 37:25 մէջ: Խորքին մէջ երկուքն ալ կան. բժշիկն ալ բալասանն ալ: Բժիշկը մարգարէն է, իսկ բալասանը՝ ապաշխարութիւնն ու արդարութիւնը:

✘ ✘ ✘